ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

<<<< ԿԳՄՍՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Տառի ուսուցում
Անցկացման վայրը՝ Մարտունի

Աշխատանքի ղեկավար՝ Հասմիկ Բեյբության

Ուսուցիչ՝ Անուշ Սիմոնյան
Դպրոց՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկի կրթահամալիր

Մարտունի 2022

Բովանդակություն

1.Ներածություն.....3
2. Գրական ակնարկ 7
3. Փորձարարական հետազոտություն.....11
3.1-Խմբի նկարագիրը 11
3.2-Փորձարարական դասեր.....11
3.2.1-Փորձարարական դաս-1.....11
3.2.2-Փորձարարական դաս-2.....12
4. Եզրակացություն 133
5. Օգտագործած գրականության ցանկ 144
6. Հավելված 155
Դասապլան-1..... **Ошибка! Закладка не определена.**5
Դասապլան-2..... **Ошибка! Закладка не определена.**6

1.Ներածություն

Արդի աշխարհում տեխնիկայի և գիտության սրընթաց զարգացումը նոր խնդիրներ է դնում կրթության առջև: Բազմաթիվ մասնագիտություններ, որոնք այսօր հարգի են, շուտով փոխարինվելու են մեքենաների և ռոբոտների աշխատանքով: Ահա այդ է պատճառը, որ հանրակարթական դպրոցում հայոց (մայրենի) լեզվի և գրականության ուսուցումը և ուսումնառությունը ևս հիմնավոր փոփոխության կարիք ունեն: Մայրենի լեզվի ուսումնառության շեշտադրումը պիտի լինեն որոշակի կարողությունների և հմտությունների, ինչպես նաև սովորողի վերաբերմունքի, արժեքային համակարգի ձևավորումը, զարգացումը և կատարելագործումը:Դասավանդումն առաջին դասարանում դասվարի աշխատանքային գործունեության մեջ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում:

Իմ համոզմամբ ուսուցումն արդյունավետ ու նպատակային է դառնում այն դեպքում, երբ երեխան հաճույքով է ներգրավվում այդ գործընթացի մեջ: Դրա համար կարևորում եմ մի շարք առանձնահատկություններ, որոնց շնորհիվ դպրոց ոտք դրած յուրաքանչյուր երեխայի համար ուսումնական գործընթացը կդառնա գրավիչ ու հետաքրքիր:

Միջավայրը: Դպրոցական միջավայրը պիտի լինի գրավիչ, հետաքրքիր, ուրախ, գունեղ ու հարմարավետ:

Շրջապատը: 1.Երեխան ինքնավստահություն է ձեռք բերում այն ժամանակ, երբ ուսուցիչն իր ընկերն է, ով իրեն լսում է, ոգևորում է ու վստահում:
2. Դասարանը, խումբը, որտեղ բոլորը համերաշխ են և աջակցում են իրար:

Խաղը: Կրտսեր դպրոցական տարիքում խաղն անընդհատ ուղեկցում է երեխային: Այն ամենը, ինչ նրան խաղով է տրվում, հեշտ է յուրացնում:

Ուսուցման նորագույն միջոցները: 21-րդ դարում անհնար է ուսումնական գործընթացի մեջ շրջանցել թվային միջոցների կիրառումը: Սակայն այն պետք է դառնա ոչ թե նպատակ, այլ միջոց՝ ուսումնական գործընթացն առավել արդյունավետ դարձնելու համար:

Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը: Դասի ընթացքն արդյունավետ ու գրավիչ կազմակերպելու համար պետք է կիրառել ուսուցման ժամանակակից մեթոդներ: Ուսուցչից պահանջվում են որոշակի հմտություններ, որպեսզի նա՝ ելնելով ուսուցանվող թեմայից, պահի թելադրանքից, ուսումնական աշխատանքի ձևից, գործունեության տեսակից, կարողանա կիրառել այս կամ այն մեթոդը:

Համագործակցությունը ծնողական համայնքի հետ: Երբ ուսուցիչ-ծնող հարաբերություններում փոխադարձ վստահություն կա, ամեն ինչ ավելի հեշտ է ստացվում:

Հենց այս մոտեցումներով էլ այս ուսումնական տարում սկսեցի աշխատանքս առաջին դասարանցիների հետ: Մենք շատ արագ մտերմացանք՝ ես, առաջին դասարանցին և իմ ու նրա նոր ուսումնական գործիքը՝ նեթբուքը:

6 տարեկան երեխային, ավելի ճիշտ՝ բոլոր երեխաներին էլ գրավում է յուրաքանչյուր թվային միջոց, լինի դա նեթբուք, բջջային հեռախոս, ֆոտոխցիկ կամ մի այլ բան: Դասվարի խնդիրն է այնպես անել, որ երեխան այդ միջոցն ընկալի նաև որպես ուսումնական գործիք, այլ ոչ միայն խաղալիք: Մեզ մոտ կարծես թե դա ստացվել է: Նեթբուքն այսօր սովորողի ընկերն է, գործիքն է, որով նա կարողանում է նկարել, մուտքագրել, խաղալ ուսումնական խաղեր, դիտել տեսանյութեր, աղյուսակներ գծել, նյութեր պատրաստել:

Ընդհանրապես, 6 տարեկան երեխան սիրում է խոսել: Եթե ուշադիր լինենք, հետևենք նրա խոսքին, կհասկանանք, որ այն շատ «լուրջ» է և միշտ մտորումների, նոր գաղափարների, մտահղացումների տեղիք է տալիս: Երեխան պատմում է այն ամենի մասին, ինչն իրեն հետաքրքիր է, ինչն իրեն հուզում է: Երեխան տառը մտապահում է հենց բառով, բառով է տառը կենդանանում, հնչում: Երեխան մայրենի լեզվի կրողն է: Մայրենի լեզուն սեփական մտքերը, հույզերն արտահայտելու, մարդկանց հետ շփվելու, շրջապատող աշխարհը և մարդկանց հասկանալու, բնության, հասարակության և մարդու մասին բազմաբնույթ գիտելիքներ ստանալու, գրական-գեղարվեստական արժեքներին հաղորդակից դառնալու, սեփական ստեղծագործական ունակությունները դրսևորելու և զարգացնելու բացառիկ հնարավորություններ է տալիս: Նա լավ թե վատ, ճիշտ թե սխալ անընդհատ հաղորդակցվում է, ճանաչում ինքն իրեն, արտահայտում իր մտքերը, փորձում հասկանալ ու հասկանալի լինել: Մայրենի լեզվի ուսուցում ասվածը պայմանական է, քանզի մարդն այն յուրացնում է ամբողջ կյանքի ընթացքում: Երեխան ծնված օրվանից արդեն կրում է մայրենի լեզուն: Կրտսեր դպրոցի խնդիրն է դառնում օգնել երեխային գրավոր և բանավոր խոսքը ճիշտ ձևակերպել, կարողանալ արտահայտել իր հույզերը, զգացմունքները ու հաղորդակցվել: Մայրենի լեզվի ուսուցումը, որպես ուսուցման հիմնական լեզու, անընդհատ է ու սերտորեն կապված է սովորողի ամենօրյա գործունեության հետ, իսկ մայրենի լեզվի նախ տառերը, ապա հնչյունային նրբությունները, երեխան սկսում է սովորել առաջին դասարանում՝ Այբբենարանի միջոցով.

Առաջին դասարանցուն **ներկայացվող պահանջներն են՝**

. Պատմել իր, ընտանիքի, ընկերների, օրվա և նախասիրությունների մասին.

. Բացատրել, մեկնաբանել ծանոթ բառերի իմաստները.

. Պատմել լսած հեքիաթը, պատմությունը, տեսած ֆիլմը, մուլտֆիլմը.

. Բնութագրել, նկարագրել հերոսներին.

. Վերաբերմունք, կարծիք արտահայտել հեքիաթի, հերոսների, մարդկանց, արարքների վերաբերյալ.

. Պատճառաբանել սեփական կարծիքը.

. Թվարկել պատմության, հեքիաթի դեպքերն ըստ հերթականության.

. Նոր ավարտ մտածել հեքիաթի, պատմության համար կամ փոխել ավարտը.

. Նկարագրել ծանոթ առարկաները, երևույթները.

. Պատասխանել ծանոթ ստեղծագործությանը վերաբերող հարցերին:

Կարևորվում է երևակայական, ստեղծագործական մտածողության զարգացումը, որն իր արտացոլումն է գտնում բանավոր և գրավոր աշխատանքներում՝

Ծանոթ բառերը միացնելով՝ նոր, անսպասելի բառեր ստանալ և բացատրել.

Փոփոխել ծանոթ հեքիաթները՝

ա)ավելացնել կամ պակասեցնել հերոսներ

բ)փոփոխել իրադարձությունները

գ)փոփոխել սկիզբը, ավարտը

դ) տարբեր հեքիաթների հերոսներով նոր հեքիաթ հորինել:

Առաջին դասարանում իրականացվելիք նախագծեր՝

‹‹Դասարանական ռադիո-TV››

Այս նախագծի շրջանակում ամեն ամիս սովորողների հետ կձայնագրենք, կնկարահանենք ամենատարբեր թեմաներով վիդեո-ռադիո նյութեր, որոնց թեման, տեքստը կորոշենք, կգրենք սովորողների հետ միասին: Պատրաստի նյութը կհրապարակենք դպրոցի էլեկտրոնային էջում:

‹‹Ուրբաթյա ընթերցումներ›› նախագիծ

Ամեն ուրբաթ կունենանք ընթերցանության ժամ: Սովորողների համար կընթերցվի մի հեքիաթ և կփորձենք բեմականացնել, տիկնիկախաղի միջոցով ներկայացնել այն:

‹‹Մենք ենք, մեր մեծերը›› նախագիծ

Նախագծի շրջանակում յուրաքանչյուր սովորող կներկայացնի մի որևէ անվանի, ականավոր գործչի ու նրա ստեղծագործությունները: Նախագիծը կիրականացվի ծնողների աջակցությամբ և նրանց հետ համագործակցությամբ:

‹‹Թու՜յլ տուր քեզ մի հեքիաթ պատմեմ ›› նախագիծ

Նախագծի շրջանակում ամեն շաբաթ կձայնագրեմ մի որևէ հեքիաթ, կուղարկեմ սովորողներին և մեկ շաբաթ ժամանակ կտրամադրեմ, որպեսզի սովորողները ներկայացնեն իմ կարդացած հեքիաթը: նախագծին հետագայում կմիանան նաև այլ դասավանդողներ, սովորողների հարազատներ:

‹‹Դասարանական թատրոն›› նախագիծ

Նախագծի շրջանակում սովորողների հետ ընթերցած հեքիաթները, բանաստեղծությունները բեմականացվելու են մատնախաղերի, բեմահարթակի միջոցով և ինքնաշեն այլ պարագաների միջոցով:

Գնահատումը

Գնահատումը ուսումնական գործընթացի կարևոր խթանն է: Կարևոր է, երբ կատարած աշխատանքը, գործադրած ջանքերը գնահատվում են: Գնահատականը պիտի ոգևորի սովորողին և առաջ մղի: Ուսումնական գործընթացում գնահատման չափանիշները անփոփոխ են ու բխում են սովորողի առաջընթացի շահերից: Գնահատման նպատակը սովորողի ձեռք բերած կարողությունները, ձեռքբերումները գրանցելու և բացթողումներն ու թերացումները շտկելու համար են: Առաջին դասարանում սովորողը գնահատանիշ չի ստանում, սակայն գնահատումն իրականացվում է պատկերների միջոցով: Ստուգումը և գնահատումն ուսուցչին, սովորողին և նրա ծնողին պետք են սովորողի առաջընթացը նշելու և հետագա աշխատանքի ծավալն ու բովանդակությունը որոշելու համար: Սովորողի գնահատականը մայրենի լեզվից արտացոլում է նրա և՜ բանավոր խոսքը, և՜ գրավոր խոսքը, և՛ խոսքային ինքնարտահայտման համար անհրաժեշտ մեդիահմտությունները: Անբավարար արդյունքով աշխատանքը ենթակա է լրացման:

2. Գրական ակնարկ

Մայրենի լեզվի ուսուցման առաջին կարևոր փուլը՝ տառուսուցումը, չի տարանջատվում մայրենի լեզվին առաջադրվող մյուս խնդիրներից, այլ համարվում է գրավոր խոսքի զարգացմանը նպաստող կենդանի ու արդյունավետ մեթոդ: Ուսուցման առաջին տարվա առաջին օրերից սովորողը սկսում է տառեր, բառեր մուտքագրել ու միաժամանակ ընթերցել: Համակարգիչը, էլեկտրոնային գրատախտակը, ուսումնական խաղերը հնարավորություն են տալիս առանց արհեստական ու պայմանական բաժանումների փոխկապակցել գրաճանաչության նախագրային, գրային, ետգրային փուլերը: Երեխան նկարում-պատմում է, միաժամանակ՝ երգում-վանկատում , մուտքագրում-ընթերցում: Երեխան պատմում է այն ամենի մասին, ինչն իրեն հետաքրքիր է, ինչն իրեն հուզում է: Պատմում է իր, ընտանիքի, հարազատների, տան մասին՝ ցուցադրելով նախապես թվային ֆոտոխցիկով արված լուսանկարները, դիտում՝ ընկերոջ ցուցադրած ֆոտոշարքը և տալիս իրեն հետաքրքրող հարցը, ֆոտոշարքից առանձնացնում որոշակի նկարներ, կոնկրետացնում խոսքը, ապա նկարագրում, բնութագրում, բացատրում, մեկնաբանում, հետո անվանում (տեսքտից անցում պարբերության, նախադասության, բառակապակցության, բառի, հնչյուն-տառի): Գրական նյութերի (ոտանավորներ, հեքիաթներ, խաղիկներ, հանելուկներ, առած- ասացվածքներ) ուսուցման ժամանակ թվային միջոցների գործածումը նոր մեթոդների կիրառում է ենթադրում: Երեխան լսում ու դիտում է հեքիաթներն ու բանաստեղծությունները (աուդիո-գրքեր, մուլտֆիլմեր), ապա պատմում -ձայնագրվում թվային ձայնագրիչով ու նորից լսում, հետո նկարում՝ վրձնով, ինչպես նաև համակարգչով, բեմադրում-տեսագրվում՝ դառնալով հեքիաթի, ոտանավորի կերպար ու հերոս: Այդպես մեդիան ուսումնական գործընթացը ավելի արդյունավետ, ժամանակակից ու հետաքրքիր է դարձնում:Ուսուցողական այսպիսի միջավայրում երկրորդ, երրորդ, չորրորդ դասարանացին ավելի համարձակ ու վստահ է արտահայտվում: Ավելանում են բանավոր, ինչպես նաև գրավոր խոսքին ներկայացվող պահանջները: Կազմակերպվում է առկա, հեռահար և առցանց ուսուցում՝ մայրենի լեզուն անընդհատ գործածելու ու զարգացնելու հնարավորություն տալու համար: Անընդհատ ընթերցելու, վերլուծելու, քննարկելու, գրելու, արտահայտվելու, հարցնելու հնարավորություն է տալիս mskh-ը՝ իր թվային գրադարանով, ենթակայքերով, դասարանական կայքէջերով, բլոգներով: Սովորողի վրձնով կամ Paint ծրագրով նկարած նկարը, ֆոտոշարքը, ձայնագրությունն ու տեսաֆիլմը, հորինած

պատմությունները պարբերաբար հայտնվում են դպրոցի կայքէջում, բլոգում: Սովորողը գիտի, որ իրեն հետևում են՝ սպասում են իր նոր նկարին կամ պատմությանը, ընթերցած նյութի վերաբերյալ իր կարծիքին, ընկերոջ հորինածի մասին իր մեկնաբանությանը: Կրտսեր դպրոցում մայրենի լեզվի խնդիրը խոսքային հմտությունների, կարդալու կարողությունների զարգացումն է: Իսկ սովորողը կարդում ու գրում է անընդհատ, բոլոր դասաժամերին: Այստեղ ևս մեկ անգամ ընդգծվում է մայրենիի անընդհատ ուսուցումը. մաթեմատիկայի դասին՝ խնդրի պայմանների վերլուծության, բացատրության, պահանջի ձևակերպման, պատճառաբանության, պատասխանի, բնագիտության դասին՝ փորձի ներկայացման, դիտարկման, արդյունքների գրանցման, ուսումնական ճամփորդության ժամանակ՝ տեսածը պատմելու, ներկայացնելու, հարցադրումներ անելու տեսքով: Ընթերցանության նյութերի ընտրությունն էլ ինքնանպատակ չէ : Կրտսեր դպրոցականի խոսքը զգայուն է: Հայ դասական ստեղծագործությունների ուսուցումը փոխանցում է այնպիսի լեզվական կաղապարներ, որոնք նպաստում են լեզվամտածողության զարգացմանը: Համաշխարհային մանկական գրականությունից ընտրվում են այնպիսի նմուշներ, որոնց ընթերցումը խթանում է սովորողի ստեղծագործական միտքը, նպաստում երևակայության զարգացմանը: Սովորողի կատարած աշխատանքը դպրոցում և տանը՝ Կարդալ սովորում են կարդալով, գրել՝ գրելով: Կարդալ: Կարդալ, դեռ չի նշանակում հասկանալ: Կարևոր է կարդացածը հասկանալ: Իրեն հասկանալի տեքստը հասկանալի ներկայացնել դիմացինին: Կարդալիս առանձնացնել հիմնական ասելիքը, միտքը, գաղափարը: Բառարանի օգնությամբ բացատրել անծանոթ բառն ու դարձվածքը, գտնել հանդիպած բառերի հոմանիշներն ու հականիշները, պատմելիս դրանք փոխարինել համապատասխան բառով կամ արտահայտությամբ: Դասագիրքը չի կարող լինել ուսումնական միակ կամ գլխավոր նյութը, տեղեկատվության միակ աղբյուրը. ուսումնական նյութերը անընդհատ թարմացվում-հարմարեցվում են սովորողին: Ուսումնական նյութերի հիմնական շտեմարանը մեդիագրադարանն է, որի բաժանորդն են սովորողն ու ուսուցիչը: Մեդիագրադարանն անընդհատ լրացվում էթվային (այլոց կողմից և տեղում՝ կրթահամալիրի սովորողների, ուսուցիչների կողմից թվայնացված) գրքերով, համացանցային ռեսուրսներով և կրթահամալիրի ուսուցիչների, սովորողների և այլոց ստեղծած տեսա-աուդիոնյութերով: Ուսումնական նյութեր ընտրելիս և հաձնարարելիս ուսուցիչը նկատի է ունենում նաև սովորողի ընդունակությունները և նախասիրությունները: Կարդում են դասական ստեղծագործություն, գիտահանրամատչելի նյութ, լուր, տեղեկություն, խնդիր, առաջադրանք: Գրել: Սովորողը պիտի ցանկանա գրել իրեն ծանոթ, իրեն հարազատ, իրեն մոտ, հետաքրքիր, իրեն առնչվող թեմաների մասին: Երեխան պիտի գրի իր մասին, իր

ապրումների, իրեն շրջապատող աշխարհի, մարդկանց ու իրեն հուզող ու հետաքրքրող երևույթների, իրադարձությունների մասին: Նման թեմաների շուրջ երեխաներն անընդհատ կարող են գրել: Կարող են գրել նկարագրական շարադրություններ, պատրաստել տեղեկատվական նյութեր, օրվա մասին պատմել, գրել նամակներ, ինչպես նաև՝ հայտարարություններ ու շնորհավորանքներ: Տառի ուսուցման համար ընտրել էի «Նախագծային ուսուցման» մեթոդը.

Նախագծային ուսուցում առաջին դասարանում- «Ռոդարի» նախագիծը առաջին դասարանում

Ուսումնական նախագծերը կազմելիս ուղղորդվում ենք կրթահամալիրի ուսումնական օրացույցով:Նախագիծը պետք է ունենա սկիզբ, ընթացք և ավարտ, որը պետք է ներկայացնել տարբեր ֆիլմերի, ֆոտոշարքերի,ընթերցարանների,աուդիոգրքերի միջոցով: Նախագծերը լինում են կարճաժամկետ և երկարաժամկետ: Որոշ նախագծեր ձգվում են ողջ տարվա ընթացքում, այսինքն՝ շարունակական են: Նախագիծը պետք է ունենա հստակ ձևակերպված խնդիրներ և նպատակներ, որոնց միջոցով կզարգանան սովորողի մի շարք հմտություններ և կարողություններ: Շատ կարևոր է նախագիծ իրականացնելիս գտնել նոր մոտեցումներ, մեթոդներ և կարողանալ դրանք արդյունավետ կիրառել: Այս ուսումնական տարում իրականացրել ենք և դասարանական, և ընտանեկան նախագծեր: Առաջին դասարանում դասարանական նախագծերը ստեղծվում են դասվարի օգնությամբ, իսկ ընտանեկան նախագծերը իրականացվում են ծնող-սովորող համատեղ գործունեության ընթացքում: Նախագծերի արդյունքում ստեղծված նյութերը դասվարը տեղադրում է դասարանական բլոգի համապատասխան բաժիններում:

Առաջին դասարանում իրականացրել ենք հետևյալ նախագծերը.

«Տիեզերք»,«Ես կարողանում եմ» ,«Խնկոյանական օրեր», «Ամանոր», «Ձմեռային ճամբար», «Ուսումնական արձակուրդ», «Թումանյանական օրեր», «Աղայանական օրեր»,«Ռոդարիական օրեր»,«Զատիկ»,«Իմ գրադարանը», «Մայրիկատոն» էլեկտրոնային այբբենարան:

Ավելի մանրամասն ներկայացնեմ «Ռոդարին մեր դասարանում» նախագիծը:

Նախագծի խնդիրներն ու նպատակներն էին ծանոթանալով Ռոդարիի ստեղծագործություններին և սովորողներին ներգրավելով ուսումնական գործունեության մեջ՝ զարգացնել ստեղծագործական երևակայությունը, բանավոր խոսքի, տեխնոլոգիական, մեդիատեխնոլոգիական հմտությունները, ստեղծել խմբային (դասարանական) մեդիանյութեր, մեդիափաթեթներ, «Ռոդարիկ» ընթերցարաններ և աուդիոհեքիաթներ:

Գիտենք, որ ամենաշատը երեխաները սիրում են պատմել, հորինել, ստեղծագործել ու երևակայել:Առաջին դասարանում ուսուցման հիմքում բանավոր խոսքն է: Առաջին հերթին սկսեցինք կարդալ թումանյանական, աղայանական հեքիաթներ, բանաստեղծություններ, դրա հետ մեկտեղ սկսեցինք հորինել փոքրիկ պատմություններ, ապա paint նկարչական ծրագրով նկարել մեր հորինածը: Բանաստեղծության,հեքիաթից դուր եկած հատվածները նկարելու հետ նաև սկսեցինք հորինել նոր հեքիաթներ և նկարել դրանք: Ընթերցեցինք ռոդարիական հեքիաթները՝«Շփոթ պապ», «Ալիսա Գլորիկ», «Թարս հարցեր»: Կարդացինք «Շփոթ պապը» հեքիաթը, ձայնագրեցինք և թողարկեցինք մեր դասարանական բլոգի Ուրախիկների Ռադիո բաժնում:Այնուհետև, զարգացնելով հեքիաթը, բաժանեցինք մասերի և նկարչական ծրագրով նկարեցինք,կցեցինք ձայնագրությունը և արդյունքում ստացվեց մեդիահեքիաթ `«Շփոթ պապը»: Ռոդարիական հնարքով խառնեցինք մեր իմացած թումանյանական հեքիաթներն իրար, հորինեցինք նոր վերնագրեր, նոր ավարտ,նոր հեքիաթներ, որի արդյունքում էլ ստեղծվեց Հեքիաթների շիլաշփոթ էլեկտրոնային ընթերցարանը: Շիլաշփոթը շարունակվեց, երբ կարդացինք «Ալիսա Գլորիկի» հեքիաթը: Դասարան գլորվեցին մեր հորինած նոր հեքիաթների հերոսները՝Արքայադուստր Ալիսաները: Յուրաքանչյուր սովորողի հորինած հեքիաթից ընտրեցինք հերոսներ, ստվարաթղթով պատրաստեցինք կերպարներ և ամրացրեցինք կենցաղում օգտագործվող ամրակների վրա: Դրանցով դասարանում ամրացնում ենք մեր աշխատանքները: Պատրաստվում ենք այդ կերպարներով ներկայացնել մեդիաներկայացում:

Գլորիկներին հաջորդեց «Թարս հարցերի» հեքիաթը, որը մեծ ոգևորություն մտցրեց դասարան: Հորինեցինք թարս հարցեր, ձայնագրեցինք և հեքիաթն ամփոփեցինք: Դասարանում հայտարարեցինք թարս ու շիտակ իրերի օր:

Պատմեցինք մայրիկների մասին, նկարեցինք մայրիկներին և նրանց համար պատրաստեցինք զանազան բացիկներ, ծաղիկների թաղարներ,ռոդարիական հնարքներ օգտագործեցինք և պարզեցինք, թե ինչից են պատրաստված մայրիկները: Լսեք բլոգում:

Նախագծային ուսուցումը սովորողների որոշակի գործողությունների հաջորդականությունների, հնարների համադրություն է, որոնք իրականացվում են տրված առաջադրանքը կատարելու նպատակով՝ յուրաքանչյուր սովորողի համար էական և որոշակի վերջնական արդյունքի տեսքով: Նախագծային մեթոդի հիմնական նպատակն է սովորողներին տալ հնարավորություն գործնական խնդիրների կամ

առաջադրանքների լուծման գործընթացում ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ՝ տարբեր առարկաներից գիտելիքների ինտեգրման միջոցով:
Այստեղ ուսուցիչը ստանձնում է մշակողի, համակարգողի, փորձագետի, խորհրդատուի դեր:
Ցանկացած նախագծի հիմնական նպատակն է տարբեր կարողությունների ձևավորումը, որոնք ժամանակակից մանկավարժությունում անվանում են անձնային համալիր առանձնահատկություններ: Այն է՝ գիտելիքների, հմտությունների, արժեքների փոխկապակցում, ինչպես նաև համապատասխան իրավիճակում նրանց մոբիլիզացում և կիրառելու պատրաստակամություն:
Գրաճանաչության ուսուցման կարևորագույն նյութը, միավորը **հնչյունն է,** կարևոր է նաև բառային մեթոդը, քանի որ կարդալու ուսուցման սկզբնական նվազագույն միավորը **բառն է,** նախ՝ միավանկ բառերը, այնուհետև նաև՝ բազմավանկ բառերը:

3. Փորձարարական հետազոտություն

3.1-Խմբի նկարագիրը

Ես իմ հետազոտական աշխատանքն անցկացրել եմ Գեղարքունիքի մարզի Վարդենիկի կրթահամալիրի 1-ին դասարանում:
Հաշվի առնելով սովորողների տարիքը, ես որոշեցի կիրառել «Նախագծային ուսուցում» մեթոդը, որպեսզի մեծանա աշակերտների հետաքրքրությունն ու մոտիվացիան դասապրոցեսներին մասնակցելու՝ այսինքն իրենց մտքերն ազատ ու հստակ արտահայտելու, ինքնուրույնություն ձեռք բերելու համար:
Այս դասարանում սովորում են 17 աշակերտ՝ 10 աղջիկ և 7 տղա, որոնք ունեն տարբեր ընդունակություններ:
Մայրենի լեզու առարկան անցնում են շաբաթական 7 ժամ, այն դասացուցակում տեղադրված է 1-ին կամ 2-րդ ժամերին:

3.2-Փորձարարական դասեր

3.2.1-Փորձարարական դաս-1

Այսօրվա դասն է՝ Ջ հնչյուն տառի ուսուցումը:
Դասը սկսվեց հարցադրումներով, մեծ և բուռն քննարկում տեղի ունեցավ աշակերտների և ուսուցչի միջև:

Կատարվում է հին դասի ամփոփում հարց ու պատասխանի միջոցով (Ծ հնչյուն-տառ): Գրատախտակին Ծ հնչյուն-տառով բառեր փակցնել և ձևավորել երիցուկ: Կարդալ «Ծառատունկ» դասը:

Ամբողջ դասարանը ներգրավված էր դասապրոցեսին:

Ուսուցանել Ձ տառը:

3.2.2-Փորձարարական դաս-2

Դասն սկսեցի հարց ու պատասխանով՝ անցած թեմայի վերհիշմամբ: Կատարվում է հին դասի ամփոփում հարց ու պատասխանի միջոցով (Ձ հնչյուն-տառ): Գրատախտակին Ձ հնչյուն-տառով բառեր փակցնել և ձևավորել երիցուկ: Արտասանել «Ձնծաղիկ» բանաստեղծությունը, նկատել որ դասարան բերված ձյունը հալվել և դարձել է ջուր:

Հարցնել թե որ հնչյունով է սկսվում ջուր բառը:

Պատմել փոքրիկ ավանդություն «Ձերմուկ» բնակավայրի հանքային ջրի բուժիչ հատկությունների մասին: Կարդալ բառաշարքերը, բնագիրը: Կարդալ և բացատրել առածի իմաստը: Սովորել շուտասելուկը:

Յուրքանչյուր սովորող իր բառապաշարի ու պատկերացումների համապատասխան փոքրիկ նախադասություններ՝ անցած տառերով:

4.Եզրակացություն

Երկու փորձարարական հետազոտությունների արդյունքում, կիրառելով նախագծային ուսուցման մեթոդը, եկա այն եզրակացության, որ, Նախագծային ուսուցումն ավելի արդյունավետ է «Սովորողի կարողությունների զարգացում և հմտությունների ձևավորում» հիմնախնդրի լուծման գերակայության դեպքում:

Միաժամանակ արձանագրեցի, որ.

1.Սովորողների մեծ մասը հակված է իրականացնելու միջնաժամկետ նախագծեր:

2.Նախագծային ուսուցումն արագացնում է օտար լեզուների յուրացումը:

3.Նախագծային ուսուցումը ներդաշնակեցնում է անհատի զարգացման մրցակցային և համագործակցային հարացույցները:

4.Երկարաժամկետ նախագծի իրականացումը գիտական մտածողության ձևավորման անկյունաքարն է:

5.Նախագծային գործունեության ընթացքում սովորողի գնահատումը գերադասելի է երկբալանոց՝ կարող է շարունակել մասնակցությունը նախագծին կամ չի կարող, իսկ նախագծի ամփոփման ժամանակ սովորողի ձեռք բերած արդյունքների գնահատումը հարկ է, որ հենվի ինքնագնահատականի և խմբի մյուս անդամների գնահատականի, ինչպես նաև հրապարակային պաշտպանության արձագանքների վրա:

6.Նախագծային ուսուցման մեթոդի բացարձականացումը վտանգում է սովորողի անհատականության զարգացման համակողմանիությունը և աղքատացնում է մանկավարժական գործիքների արհեստանոցը:

7.Անհրաժեշտ է միշտ ուշադրության կենտրոնում պահել նախագծային ուսուցման միջառարկայական բնույթը:

8.Իրականացված նախագծի արդյունքների հրապարակային պաշտպանությունը բարձրացնում է սովորողի ինքնագնահատականը և նպաստում նրա սոցիալականացմանը:

5. Օգտագործած գրականության ցանկ

1. Ձեռնարկ ուսուցիչների պատրաստման համար, գործիմաց մոտեցում, Տեսություն և պրակտիկա, ԱՅՈԵՔՍ, Եր., 2004:

2. Ա. Քյուրքչյան, Լ. Տեր-ՍահակյանԱյբբենարան, ուսուցչի ձեռնարկ., Եր. 2007

3. Սարուխանյան Ս., Դիշաջաղայան Ն. և ուրիշներ, Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր, 2008:

4. Մեթոդական ուղեցույց առաջին դասարանի ուսուցիչների համար., Եր. 1995

5. Շավարշյան Ա. Մ., Հայ մանկավարժներ, Եր., 1958, հ. 1-2

6. Հավելված

Դասապլան-1

Առարկան՝ Մայրենի

Ամսաթիվը՝ 11.03.2020 թ.

Դասարան՝ Առաջին

Դասի թեման՝ Ձ հնչյուն - տառի ուսուցում

Դասի տեսակը՝ Նոր նյութի հաղորդում

Դասի նպատակները՝

• ուսուցանել «Ձ» հնչյուն - տառը,

• պատմություն հյուսել թեմատիկ նկարի շուրջ,

• զարգացնել կարդալու սկզբնական կարողությունները,

• բանավոր խոսքի զարգացում, բառապաշարի հարստացում,

• սովորել նոր բառերի բացատրությունը (ձոր,ձող),

• կազմել բառակապակցություններ (ձյուն,ձնծաղիկ, ձյունաբուք),

• ամրակայել պատմություն - տառ շղթան,

• կազմել բառեր, որտեղ «Ձ» հնչյունը բառասկզբում է, բառամիջում , բառավերջում ,

• գրել «Ձ» տառը

•Բաժանել թղթեր որոնց վրա գրում են Ձձ տառերը, ներկում են տպատառ Ձձ տառերը

•Լրացնել բաց թողնված ձ տառը բառերում:

•Կատարել անդրադարձ

• տեղեկություններ հաղորդել հայրենի բնաշխարհի մասին:

Կահավորանքը՝ մեծադիր տառապատկերներ, համակարգիչ, պրոյեկտոր, մեծ էկրան, ձյուն, ձնունաբուք, ձնծաղիկ,

Դասին օգտագործված մեթոդները՝ հարց ու պատասխան, մտագրոհ, կանխագուշակման, բանալի բառեր

Դասապլան-2

Առարկան՝ Մայրենի

Ամսաթիվը՝ 12.03.2020 թ.

Դասարան՝ Առաջին

Դասի թեման՝ Ձ հնչյուն - տառի ուսուցում

Դասի տեսակը՝ Նոր նյութի հաղորդում

Դասի նպատակները՝

• ուսուցանել «Ձ» հնչյուն - տառը,

• պատմություն հյուսել թեմատիկ նկարի շուրջ,

• զարգացնել կարդալու սկզբնական կարողությունները,

• բանավոր խոսքի զարգացում, բառապաշարի հարստացում,

• սովորել նոր բառերի բացատրությունը (ջոկ,փնջել),

• կազմել բառակապակցություններ (գեղեցիկ ջրվեժ,սառը ջուր, քաջ զինվոր,սպիտակ ջրաշուշան),

• ամրակայել պատմություն - տառ շղթան,

• կազմել բառեր, որտեղ «Ձ» հնչյունը բառասկզբում է, բառամիջում , բառավերջում ,

• գրել «Ձ» տառը

•Բաժանել թղթեր որոնց վրա գրում են Ձջ տառերը, ներկում են տպատառ Ձջ տառերը

•Լրացնել բաց թողնված ջ տառը բառերում:

•Կատարել անդրադարձ

• տեղեկություններ հաղորդել հայրենի բնաշխարհի մասին:

Կահավորանքը՝ մեծադիր տառապատկերներ, համակարգիչ, պրոյեկտոր, մեծ էկրան, ձյուն/ջուր, ջութակ, ջրաշուշաններ,

Դասին օգտագործված մեթոդները՝ հարց ու պատասխան, մտագրոհ, կանխագուշակման, բանալի բառեր